

**ԵՐԿԱՐԱԶԳՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏ
ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ**

07.06.2018 11:44

Հարգելի փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 01.03.2018թ. թիվ 106-Լ որոշմամբ «Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» կարգում (այսուհետ՝ **Կարգ**) կատարված փոփոխություններով սահմանվել է փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտի տրամադրման կարգը:

2018 թվականի մարտի 1-ի դրությամբ գործող փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող փաստաբանների համար Կարգով սահմանվել է փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտն անվճար ստանալու հնարավորություն՝ Կարգով սահմանված ժամկետում դիմում ներկայացնելու դեպքում:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 01.06.2018թ. թիվ 234-Լ որոշմամբ 01.03.2018թ. դրությամբ գործող փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող փաստաբանների կողմից արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտ ստանալու դիմումը ներկայացնելու համար Կարգով սահմանված ժամկետը երկարացվել է ՄԻՆՉԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ը ՆԵՐԱՌՅԱԼ:

Պլաստիկ քարտ ստանալը փաստաբանին չի զրկում իր վկայականը և արտոնագիրը զուգահեռ օգտագործելու իրավունքից:

Բեռնել «Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» կարգը.

*** Կարգի վերջին ինկորպորացիան՝ 30.04.2018թ. դրությամբ**

Բեռնել փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտ ստանալու մասին դիմումի ձևաթուղթը.

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```